ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/21

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Բողոք բերող՝ «Դավարտ» ՍՊԸ
Գործով ներգրավված երրորդ կողմ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Մասնակցությամբ՝
«Դավարտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» ծածկագրով բաց մրցույթ, Երևան քաղաքում հոտիոտնային կանչի թվով 63 լուսացուցային համակարգերի ձեռք բերման և տեղակայման աշխատանքներ ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Դավարտ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 18.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. պարտավորեցնել թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու 11.03.2021 թվականի թիվ 3 արձանագրությամբ՝ թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Էներգացանցշին» ԲԲ ընկերության և «Ասկետ-16» ՍՊ ընկերության հայտերը բավարար գնահատելու վերաբերյալ արձանագրային որոշման փոփոխման և «Էներգացանցշին» ԲԲ ընկերության և «Ասկետ-16» ՍՊ ընկերության հայտերը մերժելու որոշումներ,

2. պարտավորեցնել թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 16.03.2021 թվականի թիվ 4 արձանագրության վերացման կամ չեղարկման և թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով բանակցություններ հրավիրելու որոշումներ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 18.03.2021թ.-ին:

19.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/21 համարի ծածկագիրը:

29.03.2021թ.-ին ներկայացված միջնորդությամբ Ընկերությունը հրաժարվել է «Ասկետ-16» ՍՊԸ-ի մասով ներկայացրած բողոքի պահանջից:

30.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ, Բողոքներ քննող անձը, հաշվի առնելով վերոնշյալ միջնորդությունը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» մասին կարգի 22-րդ կետի դրույթները, որոշել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/21 բողոքը՝ «Ասկետ-16» ՍՊԸ-ի պահանջի մասով, համարել որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ և վերջինիս ներգրավվել գործով որպես երրորդ կողմ:

Բողոքներ քննող անձի 30.03.2021թ.-ի թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/6915-21 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ ֆինանսների նախարարությունը:

25.03.2021թ.-ին, 07.04.2021թ.-ին և 16.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 07.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.04.2021թ.-ին:

2. <u>«Դավարտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Դավարտ» ՍՊԸ-ն 18.03.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար 21.01.2021 թվականին հրապարակել է Երևան քաղաքում հեփիոփնային կանչի թվով 63 լուսացույցային համակարգերի ձեռքբերման և տեղակայման աշխատանքների կատարման նպատակով հայտարարված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» բաց մրցույթի հրավերը (այսուհետ նաև գնման ընթացակարգ):

1.2. Գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների շրջանակում հայտ է ներկայացրել նաև «ԴԱՎԱՐՏ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Մասնակցի կողմից գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտը գնահատվել է բավարար, որը փաստվում է գնման ընթացակարգի հանձնաժողովի 11.03.2021 թվականի թիվ 3 արձանագրությամբ:

1.3. «ԷՆԵՐԳԱՅԱՆՑՇԻՆ» ԲԲ ընկերությունը հայտ է ներկայացրել նաև գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, որը գնման ընթացակարգի հանձնաժողովի 11.03.2021 թվականի թիվ 3 արձանագրությամբ գնահատվել է բավարար, իսկ 16.03.2021 թվականի թիվ 4 արձանագրությամբ «ԷՆԵՐԳԱՅԱՆՑՇԻՆ» ԲԲ ընկերությունը ընտրված մասնակից է ճանաչվել նաև 1-ին չափաբաժնի մասով:

1.4. Գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «ԷՆԵՐԳԱՅԱՆՑՇԻՆ» ԲԲ ընկերության հայտը ներկայացվել է հրավերի պահանջների խախտմամբ: Մասնավորապես «ԷՆԵՐԳԱՅԱՆՑՇԻՆ» ԲԲ ընկերության գնային առաջարկը 1-ին չափաբաժնի մասով չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանզի ներկայացված 22 058 108 ինքնարժեքի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ն կազմում է 4 411 621.6 ՀՀ դրամ, այլ ոչ թե 4 411 621 ՀՀ դրամ:

1.5. Գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «ԱՍԿԵՏ-16» ՍՊ ընկերության հայտը ներկայացվել է հրավերի պահանջների խախտմամբ: Մասնավորապես «ԱՍԿԵՏ-16» ՍՊ ընկերության գնային առաջարկը 1-ին չափաբաժնի մասով նույնպես չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանզի գնային առաջարկով ներկայացված արժեք, ԱԱՀ, ընդհանուր գին բաղադրիչների հաշվարկը կատարված է սխալ: Մասնավորապես՝ ներկայացված 35 925 400 ՀՀ դրամ արժեքի ԱԱՀ-ն կազմում է 7 185 080

ՀՀ դրամ և այս բաղադրիչների սխալ հաշվարկը հանգեցրել է ընդհանուր գնի սխալ հաշվարկին, քանզի ԱԱՀ-ն նշվել է 7 185 100 ՀՀ դրամ:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ մասի դ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝ գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» բաց մրցույթի հրավերի 5.2. կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Իսկ նույն կետի դ ենթակետի համաձայն՝ գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված

գումարների լումարները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծությունից պետք է փաստել հետևյալը, որ մասնակիցների կողմից ներկայացվող հայտերը պետք է համապատասխանեն հրավերի պահանջներին, որի բաղկացուցիչ մաս է նաև գնային առաջարկը: Այն դեպքերում երբ մասնակիցների կողմից ներկայացվող գնային առաջարկները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ապա այն առաջ է բերում նրանց հայտերի մերժման իրավական հիմքերը, որը հայտերը գնահատող հանձնաժողովի համար պարտականություն է: Գնային առաջարկում ներառվող տվյալների համար օրենսդիրը սահմանել է որոշակի կարգավորումներ, որոնք վերաբերվում են ոչ ամբողջական թվերի պարագայում դրանք կլորացված եղանակով ներկայացնելուն: Մասնավորապես օրենսդիրը սահմանել է, որ եթե գնային առաջարկում նշվող ոչ ամբողջական թվերը կլորացվում են, ապա դրանք պետք է կլորացվեն հետևյալ կերպ՝ գնային առաջարկի ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացվում են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը: Ընդ որում Պատվիրատուի կողմից նման պայման է նախատեսվել նաև թիվ «ԵՔ- ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի հրավերով՝ 5.2. կետի դ ենթակետ, ուստի դրա չապահովումը կհանգեցնի հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտի ներկայացմանը և հայտը ենթակա կլինի մերժման: Բացի այդ ըստ հրավերի պահանջի մասնակիցների կողմից ներկայացվող գնային առաջարկները պետք է ներկայացնեն ներկայացվեն արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, իսկ այդ հաշվարկի սխալ ներկայացնելը ինքնին կհանգեցնի հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված հայտի, որը ենթակա չէ շտկման:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ «ԷՆԵՐԳԱՑԱՆՑՇԻՆ» ԲԲ ընկերության կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը ներկայացվել է հրավերի պահանջներին անհապատասխան, մասնավորապես ինքնարժեքի 22 058 108 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկման ենթակա ԱԱՀ-ն կազմում է 4 411 621.6 ՀՀ դրամ, իսկ «ԷՆԵՐԳԱՑԱՆՑՇԻՆ» ԲԲ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում նշված է 4 411 621 ՀՀ դրամ: Այսինքն «ԷՆԵՐԳԱՑԱՆՑՇԻՆ» ԲԲ ընկերության կողմից գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկում նշված ԱԱՀ կլորացվել է դեպի ներքը ամբողջական թիվ, այն պարագայում երբ պետք է կլորացվեր

դեպի վերև ամբողջական թիվ քանզի կլորացվող թիվը կազմում էր վեց տասներորդական: Ուստի նշվածով պայմանավորված պետք է փաստել, որ «ԷՆԵՐԳԱՑԱՆՑՇԻՆ» ԲԲ ընկերության կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին և «ԷՆԵՐԳԱՑԱՆՑՇԻՆ» ԲԲ ընկերության հայտը թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ենթակա էր մերժման: Նշվածի արդյունքում թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հրավիրված բանակցությունները, ոչ իրավաչափ են և օրենքի խախտմամբ ընտրված մասնակից է ճանաչվել «ԷՆԵՐԳԱՑԱՆՑՇԻՆ» ԲԲ ընկերությունը, այնինչ նրա հայտը պետք է մերժվեր:

Ինչ վերաբերվում է Գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «ԱՍԿԵՏ-16» ՍՊ ընկերության կողմից 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկին, ապա այն նույնպես չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանզի գնային առաջարկով ներկայացված արժեք, ԱԱՀ, ընդհանուր գին բաղադրիչների հաշվարկը կատարված է սխալ: Մասնավորապես՝ ներկայացված 35 925 400 ՀՀդրամ արժեքի ԱԱՀ-ն կազմում է 7 185 080 ՀՀ դրամ և այս բաղադրիչների սխալ հաշվարկը հանգեցրել է ընդհանուր գնի սխալ հաշվարկին, քանզի ԱԱՀ-ն նշվել է 7 185 100 ՀՀ դրամ: Սույն դեպքում նույնպես թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հրավիրված բանակցությունները, ոչ իրավաչափ են և օրենքի խախտմամբ բավարար գնահատված հայտեր ունեցող մասնակիցները մասնակցել են բանակցություններին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողության արդյունքում 11.03.2021 թվականի թիվ 3 արձանագրությամբ բավարար են գնահատվել «ԷՆԵՐԳԱՑԱՆՑՇԻՆ» ԲԲ ընկերության և «ԱՍԿԵՏ-16» ՍՊ ընկերության հայտերը և երկու ընկերություններն էլ հրավիրվել են բանակցություններին, ուստի պետք է փաստել, որ այդ բանակցությունները «ԷՆԵՐԳԱՑԱՆՑՇԻՆ» ԲԲ ընկերության և «ԱՍԿԵՏ-16» ՍՊ ընկերության մասնակցության հիմքով կազմակերպվել են օրենքի խախտմամբ:»:

Ելնելով վերոգրյալից, «Դավարտ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. պարտավորեցնել թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու 11.03.2021 թվականի թիվ 3 արձանագրությամբ՝ թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Էներգացանցշին» ԲԲ ընկերության և «Ասկետ-16» ՍՊ ընկերության հայտերը բավարար

գնահատելու վերաբերյալ արձանագրային որոշման փոփոխման և «Էներգացանցշին» ԲԲ ընկերության և «Ասկետ-16» ՍՊ ընկերության հայտերը մերժելու որոշումներ,

2. պարտավորեցնել թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 16.03.2021 թվականի թիվ 4 արձանագրության վերացման կամ չեղարկման և թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով բանակցություններ հրավիրելու որոշումներ:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 19.03.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/4046-2021 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Դավարտ» ՍՊԸ-ի կողմից 18.03.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 23.03.2021թ.-ին ներկայացված թիվ 61/32703h գրությամբ ներկայացրել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» ծածկագրով գնման ընթացակարգի համապատասխան փաստաթղթերի պատճենները:

4. <u>Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, 29.03.2021թ.-ին ներկայացված միջնորդությամբ Ընկերությունը հրաժարվել է «Ասկետ-16» ՍՊԸ-ի մասով ներկայացրած բողոքի պահանջից:

30.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ, Բողոքներ քննող անձը, հաշվի առնելով վերոնշյալ միջնորդությունը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» մասին կարգի 22-րդ կետի դրույթները, որոշել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/21 բողոքը՝ «Ասկետ-16» ՍՊԸ-ի պահանջի մասով, համարել որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ և վերջինիս ներգրավվել գործով որպես երրորդ կողմ: Բողոքներ քննող անձի

30.03.2021թ.-ի թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/6915-21 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն):

Նախարարությունը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով գրավոր դիրքորոշում:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքում հոտիոտնային կանչի թվով 63 լուսացուցային համակարգերի և տեղակայման աշխատանքների ձեռքբերման նպատակով 21.01.2021թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով, 1-ին չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել նաև «Դավարտ» ՍՊԸ-ն, «Ասկետ-16» ՍՊԸ-ն և «Էներգացանցշին» ԲԲԸ-ն:

iii. «Էներգացանցշին» ԲԲԸ-ն ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Երևան քաղաքում հոտիոտնային կանչի թվով 15 լուսացուցային համակարգերի ձեռք բերման և տեղակայման աշխատանքներ	22 058 108 (քսաներկու միլիոն հիսինութ հազար հարյուր ութ)	4 411 621 (չորս միլիոն չորս հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր քսանմեկ)	26 469 729 (քսանվեց միլիոն չորս հարյուր վաթսունինը հազար յոթ հարյուր քսանինը)

iv. «Ասկետ-16» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/

1	2	3	4	5=3+4
1	Երևան քաղաքում հոտիոտնային կանչի թվով 15 լուսացուցային համակարգերի ձեռք բերման և տեղակայման աշխատանքներ	35 925 400 (երեսունհինգ միլիոն ինը հարյուր քսանհինգ հազար չորս հարյուր)	7 185 100 (յոթ միլիոն հարյուր ութսունհինգ հազար հարյուր)	43 110 500 (քառասուներեք միլիոն հարյուր տաս հազար հինգ հարյուր)

v. Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

vi. Նույն արձանագրության 3.1 կետի համաձայն՝ գանահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որոշել է նիստը կասեցնել, և հանձնարարել գնման ընթացակարգի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա սույն թվականի մարտի 16-ին ժամը 11:00-ին Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ հասցեում:

vii. Հանձնաժողովի 16.03.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների որոշելու նպատակով անցկացվել է գների նվազեցման բանակցություններ, որին ներկայացել են «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն, «Ասկետ-16» ՍՊԸ-ն, «Դավարտ» ՍՊԸ-ն, «ՑԵՆՏՐԱ ԿՈԼ» ՍՊԸ-ն և «Էներգացանցշին» ԲԲԸ-ն:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Երվադա» ՍՊԸ-ի, «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի, «Ասկետ-16» ՍՊԸ-ի հայտերը՝ առաջարկած գինը նախահաշվային գնից բարձր լինելու պատճառով:

ix. Հանձնաժողովի 16.03.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» ծածկագրով գնման ընթացակարգի՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ, հաղթող (ընտրված) մասնակից է ճանաչվել՝ 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով «Էներգացանցշին» ԲԲԸ-ն, 2-րդ չափաբաժնի մասով «Դավարտ» ՍՊԸ և «ՑԵՆՏՌԱ ԿՈԼ» ՍՊԸ-ն՝ համատեղությամբ:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Դավարտ» ՍՊԸ-ի կողմից 18.03.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգը՝ «Ասկետ-16» ՍՊԸ-ի մասով, հիմնավոր է և ենթակա բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն

չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքում հոտիհոտնային կանչի թվով 63 լուսացուցային համակարգերի և տեղակայման աշխատանքների ձեռքբերման նպատակով 21.01.2021թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված

փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքում հոտիոտնային կանչի թվով 63 լուսացուցային համակարգերի և տեղակայման աշխատանքների ձեռքբերման նպատակով 21.01.2021թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով, 1-ին չափաբաժնի մասով հայտեր ներկայացած «Էներգացանցշին» ԲԲԸ-ն և «Ասկետ-16» ՍՊԸ-ն գնային առաջարկներով ներկայացրել են հետևյալ գները.

«Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում, 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների կատարման համար ընդհանուր գինը նշվել է 26 469 729 ՀՀ դրամ, որից՝ որպես արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)՝ 22 058 108 ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 4 411 621 ՀՀ դրամ,

«Ասկետ-16» ՍՊԸ-ն կողմից ներկայացված գնային առաջարկում, 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների կատարման համար ընդհանուր գինը նշվել է 43 110 500 ՀՀ դրամ, որից՝ որպես արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)՝ 35 925 400 ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 7 185 100 ՀՀ դրամ,

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 11.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, ուստի գանահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, որոշել է նիստը կասեցնել, և հանձնարարել գնման ընթացակարգի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա սույն թվականի մարտի 16-ին ժամը 11:00-ին Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ հասցեում:

Հանձնաժողովի 16.03.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Երվադա» ՍՊԸ-ի, «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի, «Ասկետ-16» ՍՊԸ-ի հայտերը՝ առաջարկած գինը նախահաշվային գնից բարձր լինելու պատճառով և «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» ծածկագրով գնման ընթացակարգի՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ, հաղթող (ընտրված) մասնակից է ճանաչվել՝ 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով «Էներգացանցշին» ԲԲԸ-

ն, 2-րդ չափաբաժնի մասով «Դավարտ» ՍՊԸ և «ՑԵՆՏՌԱ ԿՈԼ» ՍՊԸ-ն՝ համատեղությամբ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի «Արժեք» սյունակում նշված գումարի նկատմամբ ավելացված արժեքի հարկի գումարը պակաս է հաշվարկվել 6 (վեց) լումայով: Մասնավորապես՝ Մասնակցի կողմից վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը պետք է կազմեր 4 411 621.6 ՀՀ դրամ՝ գնային առաջարկում նշված 4 411 621 ՀՀ դրամի փոխարեն /22 058 108 (արժեք) * 20%/՝ որպիսի պայմաններում պետք է փոխվեր նաև Մասնակցի ներկայացրած ընդհանուր գինը, այն կկազմեր 26 469 729.6 ՀՀ դրամ, ըստ այդմ՝ «Արժեք» և «ԱԱՀ» սյունակներում նշված գումարների հանրագումարի և «Ընդհանուր գինը» սյունակում տառերով և թվերով լրացված արժեքի գումարի միջև առկա է 6 (վեց) լումա գումարի չափով տարբերություն:

ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

Նույն օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային հաշվարկներում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից կազմվող և հարկ վճարողին տրվող ծանուցագրերում, տեղեկանքներում, արձանագրություններում, ստուգման ակտերում և այլ փաստաթղթերում հարկ վճարողի հարկային պարտավորությունների գումարների, դեբետային գումարների և փոխհատուցման ենթակա գումարների հաշվառման համար, որպես չափման միավոր, ընդունվում է դրամը (լումաներն անտեսվում են):

Բողոքներ քննող անձը, գործում առկա փաստական հանգամանքերը վերլուծության ենթարկելով վերը բերված իրավական նորմերի և դրանց հիման վրա արված մեկնաբանությունների համատեքստում, հանգում է այն հետևության, որ «Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը համապատասխանում է վերոնշյալ իրավական նորմերի պահանջներին, քանի որ մասնակցի կողմից տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը ճիշտ է հաշվարկված՝ հետևաբար պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող ընդհանուր գինը նույնպես ճիշտ է հաշվարկվել: Մասնավորապես՝ «Էներգացանցշին» ԲԲԸ-ն, իր կողմից վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարն առանց լումա նշելով, ելել է ՀՀ հարկային օրենսգրքի 318-րդ հոդվածով սահմանված և վերապահված իրավունքից, այն է՝ որպես

չափման միավոր, ընդունել է միայն դրամը, իսկ լումաներն՝ անտեսել, որի արդյունքում «Ընդհանուր գինը» սյունակում տառերով և թվերով լրացված արժեքի գումարը ձևավորվել է առանց լումայի:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ, տվյալ դեպքում, «Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի «ԱԱՀ» սյունակում առկա գումարների չափի միայն դրամ՝ առանց լումա նշելու հանգամանքը չպետք է գնահատել որպես գնային առաջարկին վերագրվող անհամապատասխանություն, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «Էներգացանցշին» ԲԲԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն իրավաչափ է և ելնում է Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթների տրամաբանությունից:

Անդրադառնալով «Ասկետ-16» ՍՊԸ-ն կողմից ներկայացված գնային առաջարկին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ասկետ-16» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի «Արժեք» սյունակում նշված գումարի նկատմամբ ավելացված արժեքի հարկի գումարը ավել է հաշվարկվել 20 (քսան) ՀՀ դրամով: Մասնավորապես՝ Մասնակցի կողմից վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը պետք է կազմեր 7 185 080 ՀՀ դրամ՝ գնային առաջարկում նշված 7 185 100 ՀՀ դրամի փոխարեն /35 925 400 (արժեք) * 20%/՝ որպիսի պայմաններում պետք է փոխվեր նաև Մասնակցի ներկայացրած ընդհանուր գինը, այն կկազմեր 43 110 480 ՀՀ դրամ (20 (քսան) ՀՀ դրամով ավելի պակաս), ըստ այդմ՝ «Արժեք» և «ԱԱՀ» սյունակներում նշված գումարների հանրագումարի և «Ընդհանուր գինը» սյունակում տառերով և թվերով լրացված արժեքի գումարի միջև առկա է 20 (քսան) ՀՀ դրամ գումարի չափով տարբերություն:

Բողոքներ քննող անձը, գործում առկա փաստական հանգամանքերը վերլուծության ենթարկելով վերը բերված իրավական նորմերի և դրանց հիման վրա արված մեկնաբանությունների համատեքստում, հանգում է այն հետևության, որ «Ասկետ-16» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում վերոնշյալ իրավական նորմերի պահանջներին, քանի որ մասնակցի կողմից տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը սխալ է հաշվարկված՝ հետևաբար պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող ընդհանուր գինը նույնպես սխալ է հաշվարկվել: Մասնավորապես՝ «Ասկետ-16» ՍՊԸ-ն, իր կողմից վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը ավել է հաշվարկել 20 (քսան) ՀՀ դրամով, որը

չի ելելնում ՀՀ հարկային օրենսգրքի 318-րդ հոդվածով սահմանված և վերապահված իրավունքից, որը վերաբերելի է լումաներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ, տվյալ դեպքում, «Ասկետ-16» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի «ԱԱՀ» սյունակում առկա գումարների չափի սխալ նշելու հանգամանքը պետք է գնահատել որպես գնային առաջարկին վերագրվող անհամապատասխանություն, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «Ասկետ-16» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն իրավաչափ չէ և չի բխում Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Դավարտ» ՍՊԸ-ի կողմից 07.04.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/21 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգը՝ «Ասկետ-16» ՍՊԸ-ի մասով, բավարարել:

3. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Ասկետ-16» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**